

**ՅՈՐԵԼԵԱՆՆԵՐ**

***JUBILES***



## ԼՈՒԴՎԻԿ ԴՈՒՐԵԱՆ (ԼՈՒՄԵՂԻՆ ԾԵՐՈՒՆԻ ՔՐԻՍՏՈՍՈՒՐԵԱՆ)

Ես Անիկց սերված...

Հայ եմ արյամբ իմ անարատ:  
Բիրերիս մեջ որպես տեսողություն  
Եղել է սարը Արարատ:

**Մի հարցազրոյցի ժամանակ Լուդվիկ Դուրեանն ասել է.**  
«Մերոնք անեցի են: Քրիստոսասուր անունով եղել է մի վաճառական, որ գնացել է Երուսաղեմ եւ եղել է հոգեկոյի: Հագել է վեղար եւ զրադուել բարեգործութեամբ: Ենթադրում եմ, որ նա մեր նախնին է: Մերոնք գաղթել են Ղրիմ՝ իրենց հետ տանելով այդ ազգանունը: Ես 700 տարուայ անեցի եմ»:

**Լուդվիկ Դուրեանը ծնուել է 1933ի Յունիսի 21ին Ռուսաստանի Ռոստովի մարզի Նոր Նախիջևանի Միասնիկեանի շրջանի Չալթր գիւղում: Չալթրի հայ բնակչութիւնը դեռեւս 700 տարի առաջ Անիկց գաղթել էր Ղրիմ, հաստատուել այստեղ, հիմնել կաֆա քաղաքը, կառուցել տներ, եկեղեցիներ ու դպրոցներ: Բայց ոուս կայսրուհի Եկատերինայի հրամանով, իբր թէ թաթար-սէլջուկներից փրկելու նպատակով Ղրիմից տեղահանում են հայերին, որ կարօտ էին միայն Անի վերադարձին: Ու նրանք նորից բռնում են գաղթի ճանապարհ՝ այս անդամ դէպի Ռուսաստանի Դոնի անծայրածիր տափաստաններ: Ռուս կայսրուհին լաւ գիտէր, որ միայն հայը կարող է տափաստանը Եղեմի վերածել: Ու անեցի հայը, յաղթահարելով ոուսական ցուրտն ու զրկանքները, հոգում անթեղւած Անիի կարօտը, հիմնում է Նոր Նախիջևան քաղաքը՝ իր բազմաթիւ մերձակայ գիւղերով: Այդ հայկական գիւղերից մէկն էլ Դուրեանի ծննդավայր Չալթրն էր:**

**Լուդվիկ Դուրեանը Անիի հնագոյն երկու՝ Քրիստոսուրեան եւ Գոնադերյան տոհմերի ժառանգորդն է: 1935ին Քրիստոսատուրեանների ընտանիքն իրենց միակ զաւակի՝ Լուսեղէն Քրիստոսատուրեանի հետ տեղափոխում է Հայաստան եւ բնակութիւն հաստատում կոտայքի շրջանի Շահար (այժմ՝ Մայակովսկի) գիւղում: Հայրը, լինելով գիւղմեխանիզացիայի գծով մաս-**

նագէտ մեխանիկ, հայրենիք էր եկել հողը ծաղկեցնելու, պապերի բնաշխարհին ծառայելու...»

Բանաստեղծի մանկութիւնն ու վաղ պատանեկութիւնն անցնում են Շահաբում: Իր յուշերում նա գրում է. «Հիացմունքից սիրոս նիսում էր, երբ կանգնում էի ոսկետարածքի վրայ՝ նաւակի պէս սահող կամին, որ քաշում էին պոչաշարժ ու աշխոյթ եզները...»:

1940ի աշնանը Դուրեանը յաճախում է գիւղի վեցամեայ դպրոց. «Մայրս ինձ համար շատ գեղեցիկ շորեր կարեց, հայրս գնեց Այրքենարան ու պայուսակ: Ինձ մայրս ձեռքիցս բռնած տարաւ դպրոց...»: Ծնողները, Մարթա տատը, ով ապրում էր նրանց հետ, ուշադրութեամբ հետեւում էին իրենց միակ զաւակի սովորած ու գրած ամէն մի տառին, հրճում ամէն գծի համար, համբուրում ճակատը: Աւաղ ուրախութիւնը կարճ է տեւում... 1941ին սիրելի Սիրանոյշ մայրիկի առողջութիւնը խիստ վատանում է, եւ մի քանի ամիս յետոյ նա մահանում է, եւ եօթ տարեկանում որդին որբանում է... Տատը դառնում է ե'ւ տատ, ե'ւ մայր: Որոշ ժամանակ անց հայրն ամուսնանում է երկրորդ անգամ, եւ 1945ին Դուրեանը տատի հետ տեղափոխվում է Երեւան: Ապրում է նախ քեռու, յետոյ մօրաքրոջ տանը: Ուսումը շարունակում է Երեւանի թիւ 29 միջնակարգ դպրոցում: Դեռևս Զ. դասարանում ձեւաւորւում են տղայի նախասիրութիւնները նկարչութեան, գրականութեան նկատմամբ: Նկարում էր բնութիւն, առարկաներ, մարդիկ, իսկ երբ մտնում էր անկողին, գլխում ակսում էին խառնիխուռն մտքեր՝ կապուած հարազատ գիւղի, սիրելի մայրիկի, հօր հետ, ու այդ ամէնը միշտ լինում էր հանգաւոր ոտանաւորի պէս... Հէնց այդ լրջանում էլ կատարում է իր առաջին գրական քայլերը: «Պիոներ կանչ» թերթի խմբագրութիւնը տնից հեռու չէր: Նա ոտանաւորները խնամքով արտադրում էր առանձին տետրի մէջ ու տանում խմբագրութիւն:

Իր յուշերում Լուդվիկ Դուրեանը առանձնակի ջերմութեամբ է յիշում թերթի աշխատակից Ղարիբ Հայրապետեանին: Նրա խորհրդով սկսում է շատ կարդալ, յատկապէս՝ Տէրեան, որ համահունչ էր նրա ներաշխարհին ու կը նպաստէր նրա գրական ճաշակի եւ աշխարհայեացքի ձեւաւորմանը: Տէրեանը դառնում է նրա հոգու հարազատը...

Երբ առաջին բանաստեղծութիւնը տպագրուում է «Պիոներ կանչ»ում, պատանին զարմանում է՝ տեսնելով, որ իր Քրիստոս-

տուրեան ազգանունը դարձել է Դուրեան: Յետագյում յիշում է, թէ ինչպէս, իր տարակուսանքը փարատելով, Ղ. Հայրապետեանն ասել էր. «Քրիստոսուրեանը շա’տ երկար է, Դուրեանը երաշալի է, բռի դա էլ իմ կողմից լինի ենք նուեր. բացի այդ, ես շա’տ եմ սիրում Պետրոս Դուրեանին, ուզում եմ նրա նման բանաստեղծ դառնաս»:

Դպրոցական գարնանային արձակուրդի ժամանակ հօրը կարօտած որդին որոշում է գիւղ գնալ: Հայրն արդէն ուրիշ ընտանիք ունէր՝ կին, երեխաններ եւ թոքաբորբով հիւանդ էր: Որոշում է օգնել մտնում է ցախատում՝ փայտ կոտրելու, «մի անհոռնի կոնդ» ջարդելիս վնասում է աջ աչքը, եւ նա զրկում է աչքից: «Աչքիս հետ էլ իմ կեանքում շա’տ բաներ խաւարեցին: Տասու միկուսում էր՝ ասելով՝ կարկուտը ծեծած տեղն է ծեծում...»:

Սակայն անասելի ծանր օրերը չեն ընկճում բանաստեղծին. նա շարունակում է կարդալ, սովորել ու ստեղծագործել: 1949ին Դուրեանն ընդունում է Երեւանի Միջուրինի անուան գիւղատնտեսական տեխնիկում (ուսումնարան) միաժամանակ շարունակելով ստեղծագործել: Նրա բանաստեղծութիւններն օրեցօր յայտնի էին դառնում: Շատ յաճախ էր արդէն մամուլում տպագրուում: Ուսումնարանն աւարտելուց յետոյ գործուղւում է Նոյեմբերեանի շրջանի Ղալաչա գիւղի գինու գործարան: Մէկուկս տարի այնտեղ աշխատելուց յետոյ տեղափոխուում է Նորագաւաթի պետտնկարան: Այդ տնկարանում էր ծննում հայոց արեւահամ բերքի ապագան: Այստեղ աշխատում է երկու տարի: Այնուհետեւ մեկնում է Կալինինոյի շրջան եւ աշխատանքի անցնում նորաբաց «Կոլտնեսավականի ճայն» թերթում: Կալինինոյի տարիները Դուրեանի լրագրողական աշխատանքի սկիզբն էին: «Կոլտնեսավականի ճայն» թերթից յետոյ նա երկար տարիներ աշխատում է «Երեկոյեան Երեւան» օրաթերթում որպէս լրագրող, յետագյում նաև՝ որպէս բաժնի վարիչ:

1957ին լույս է տեսնում Լուդվիկ Դուրեանի անդրանիկ՝ «Արշալոյսի երգեր» ժողովածուն: Մեծն վարպետ Աւետիք իսահակեանը, ծանօթանալով Դուրեանի բանաստեղծութիւններին, շատ էր հաւանել ու գրականագէտ Սուրէն Աղաբարեանին ասել. «Էս տղին բերեք մօտս տեսնեմ, հոգում աստուածային կայծ ունի, ազնիւ խմորից է շաղախուած»: Այդ հանդիպումը լինում է. վարպետը շատ է ուրախանում, երբ իմանում է, որ Դուրեանը Անիից է ու նրան պատմում է, որ ինքն էլ է եղել Զալթրում՝ Նոր Նախիջեւանում, Ռափայէլ Պատկանեանի, Միքայէլ Նալբան-

**դեանի, Մարտիրոս Սարեանի** ծննդավայրում: Այդ անմոռանալի օրը մեծ հետք է թողնում գրողի կեանքում. «Ես կեանմիս ամենաբախտաւոր օրուայ զմայլանեով նայում էի երան...»: Խսահակեանի միւս հիւրը՝ յայտնի լուսանկարիչ Խանդիկեանը, անմահացնում է վարպետի հետ երիտասարդ բանաստեղծի հանդիպումը՝ նրանց միասին լուսանկարելով: Այդ լուսանկարը Դուրեանի համար սուրբ մասունք էր ու միշտ դրուած էր նրա գրապահարանի վրայ:

1958ին Լուդվիկ Դուրեանն ամուսնանում է սիրելի կնոջ՝ Ջեմմայի հետ: Նա էլ բանաստեղծի նման որբ էր: Դառնում է նրա ամենահարազատ ընկերը, ուրախութիւնն ու տիրութիւնը կիսողը... Ունենում են երկու զաւակներ՝ Սիրանոյշը եւ Տիգրանը: Մէկը միւսի ետեւից լոյս են տեսնում քսանից աւելի բանաստեղծական ժողովածուները՝ «Երբ ծառերը ծաղկում են», «Արեւը բոլորին է», «Ճամփորդ չեմ միայն», «Դառնամ փառարանեմ», «Եղեգան փող», «Արեգակն արդար», «Լեռները չեն խոնարհում», «Մաշտոց», «Նա իշնում է արեւից», «Արեւագիրք», «Այծենմնիկ» եւ այլն:

Դուրեանի կեանքում վճռորոշ էր մեծ բանաստեղծ Պարոյր Սեւակի հարազատ վերաբերմունքն ու մշտական հոգածութիւնը: Նրա խորհրդով 1971ին Դուրեանը մեկնում է Մոսկուայ, ընդունուում եւ յաջողութեամբ աւարտում է Գորկու անուան գրականութեան ինստիտուտը: Մոսկովեան տարիները շատ մեծ դեր են խաղում բանաստեղծի գրական-ստեղծագործական կեանքում, ինչպէս ինքն էր ասում. «քացուել էին իմ ուղեղի դռները, եւ այդ դռներով ներս էին մտնում շատ գրական գիտելիքներ»: Մոսկուայից վերադառնալուն պէս գործի է անցնում «Հայաստան» հրատարակչութիւնում որպէս գեղարուեստական գրականութեան խմբագրութեան ավագ խմբագիր, հետագայում՝ վարիչ: Նա դառնում է բազում գրքերի խմբագիր, ճանապարհ հարթում բազմաթիւ երիտասարդ գրողների անդրանիկ գրքերի համար...

Արեւի յաւերժաքնար բանաստեղծը կեանքից հեռանում է 2010ի Յուլիսի 9ին:

Մոսկուայում եւ Ռոստովում ուստեղին լոյս են տեսնում նրա բանաստեղծութիւնների չորս ժողովածուները: Լուդվիկ Դուրեանի բանաստեղծութիւնները թարգմանուել են նաեւ այլ լեզուներով եւ ընդգրկուել են «Ժամանակակից համաշխարհային գրականութիւն» մատենաշարում: Նա Յովհաննէս Թումանեանի, Աւետիք Խսահակեանի անուան մրցանակների դափնեկիր է, իսկ

2007ին Լուդվիկ Դուրենի «Մեր տարիքն Արարատն է» գրքին «Թեմիեան մշակութային միութիւն»ը շնորհում է Վահան Թեքէյեանի անուան գրական մրցանակը։ Լուդվիկ Դուրենը շուրջ քառասուն գրքերի հեղինակ է։ 2012ին՝ նրա մահից երկու տարի անց, դստեր՝ Սիրանոյշի ջանքերով լոյս է տեսնում բանաստեղծի «Այսքանը իմ կեանից» յուշերի ժողովածուն, որ մի հետաղաբարձ հայացք է նրա անցած բարդ ու լուսաւոր ճանապարհին։

Ինչպէս ասում են՝ բանաստեղծութիւնը երգ է, երգը՝ բանաստեղծութիւն։ Լուդվիկ Դուրենի խօսքերով գրուել են հարիւրաւոր երգեր։ Երգեր, որոնք «երբեք չեն ծերանում»։ Նրա մտերիմ բարեկամն էր մեծանուն կոմպոզիտոր Խաչատուր Աւետիսեանը։ Նրանց բարեկամութիւնից են ծնուել՝ «Իմ եղեգն», «Ծաղկած բալենի», «Երեւանի ջուրը», «Կապոյտ քոչուն», «Հայոց հովիկ», «Կոռունկներ», «Սիրոյ գիշեր», «Որտեղ գոնեմ քեզ», «Միայն քեզ համար», «Ո՞վ հայոց սարեր», «Այսեւ աչերով աղջիկ», «Հովուի երգը» ու բազմաթիւ սիրուած երգեր, «Տաղեր սիրոյ, պանդըխութեան, Հայրենեաց» օրատորիան՝ նորիրուած Մեծ Եղեռնի զոհերի յիշատակին, «Վարդավառ» սուխտը, «Ողբը»՝ 1988ի երկրաշարժի զոհերի յիշատակին։ Դուրենի գրչին են պատկանում Ալեքսանդր Աճեմեանի՝ մեծ ժողովրդականութիւն վայելող «Մոռնացում չկայ», «Դու սեւուկ մազով», «Արեւ աչով աղջիկ», «Ես այն չեմ», «Գարնան քեւերով եկար», «Իմ հին ընկեր», «Եւ անունը քո սեր է» երգերը, կոնստանտին Օրբելեանի՝ «Մեր սէրը երբեք չի ծերանում», «Արեւիկ», «Գալիս ես» հանրայայտ երգերը, բազում երգեր՝ գրուած Առնո Բաբաջանեանի, Ալեքսանդր Յարութիւնեանի, Ռոբերտ Ամիրիսանեանի, Մելիք Մաւիսակալեանի ու էլի բազմաթիւ կոմպոզիտորների հետ։ Դուրենի բարեկամներն ու մտերիմները մինչ օրս էլ յիշում են, թէ նա ի՞նչ կարօտով էր երգում իր անեցի պապերից ժառանգած 700ամեայ երգերը, ինչպէս, օրինակ՝ «Ասօր աղբիւր գնացի» անգուգական երգը։

Ու յոք հարյուր տարի հետո, այդքա՞ն հետո,

Որ զարմանք է հարկավ,

Բանաստեղծ եմ դառել ազգավայել

Ու պարծեցել եմ, որ

Հայ' եմ, հայ եմ, հայ եմ

Արյամբ իմ անարատ,

Որ պահել եմ քիրերիս մեջ

Որպես տեսողություն

Իմ սարը Արարատ...

## ԶԱԼԹՐԻՆ ԻՄ ԾՆՆԴԱՎԱՅՐ...

Քանդելով հին մի կծիկ,  
 Գտնելով ծայրը քելի,  
 Ճամփեքով վերահ'գ, վերահ'գ,  
 Ճամփեքով շինց երերի,  
 Եկել ևմ ու վար իշել  
 Երկիրն այս անհուն խարտյաշ,  
 Բայց կարոտն իմ բուխ ու զերմ  
 Փնտրում է բուխն այն հրաշ,  
 Որ ավեր բնից թևել,  
 Որ այստեղ, գոյությամբ հաշտ,  
 Նորից է հարատևել...  
 Զի՛ ձուլվել ծովին խարտյաշ,  
 Զի՛ ձուլվել... և նա ինչպես  
 Կակաչը ցորեն - արտում՝  
 Նայում ու ժպտում է ֆեզ,  
 Թեև սև ցավ կա սրտում:

27.07.1966թ.  
 Խոստովի մարզ, գյուղ Զալթր

## Ի՞նչ ԱՍԵՄ ՔԵԶ...

Ինչ ասեմ քեզ, Հայաստանում  
Ամեն ճամփա վեր է տանում,  
Բայց վեր տանող այդ ճամփեռով  
Այդքան էլ հեշտ չեն ընթանում:

Ճամփա կա, որ թել է ոլոր,  
Սողում է վեր՝ ձորում խոլոր:  
Թե որ հանկարծ դու սայթափես՝  
Ահեղ գետը կտանի քեզ:

Ճամփա կա, որ՝ թե վեր գնում,  
Բայց հոգնում է, մի տեղ մնում:  
Թե չարքնացնես, թե չգտնես  
Ծայրը նրա՝  
Մոլորվածի սարսափն ահեղ  
Խսկույն կիշնի սրտիդ վրա:

Ճամփա կա, որ շա'տ է վերծիգ.  
Հարկավոր է պիրկ մաքառում...  
Դու չես հաղթի երբեք նրան,  
Թե չունենաս կամք ակնառու:

Ինչ ասեմ քեզ, Հայաստանում  
Ամեն ճամփա վեր է տանում,  
Սակայն ամե՛ն, ամե՛ն ճամփա՝  
Շատ է ուզում  
Մարտնչելով դու հասկանաս  
Իր բնույթը և իր լեզուն:

6.06.1968թ.

## ԱՅՍ ԺԱՄՄԱՆԱԿՆ ԻՄՆ Է

Այս ժամանակն ի'մն է:  
 Շնորհակալ եմ շատ, որ իմ նախնիները  
 ինձ համար այսպիսի Հայրենիք են հիմնել:  
 ինձ քողել են նրան  
 Պատմություններ դարամատյան,  
 ինձ քողել են արվեստախոս խմբեր տաճարների,  
 ինձ քողել են ասովածություն  
 Բանաստեղծող հանճարների,  
 ինձ քողել են ճարտարաշնն շեներ,  
 ինձ քողել են սուրբ պաշտամունք աղ ու հացի  
 Եվ գոյության տարածություն արդարացի:  
 ինձ քողել են...  
 Եվ ինձանից հարուստ հիմա քչերը կան:  
 Սակայն ինձ քողել են նաև  
 Անսահման մեծ մի ցավ երերական:  
 Անսահման մեծ իմ աշխարհից  
 ինձ բաժին է ընկել մի լույս բեկոր:  
 Զատզատված ու հափշտակված չարի ձեռքով -  
 ի'մս, իմ երկի՞րս  
 Վայրագ բոնությամբ է սեփականված:  
 Ես, որ արդարության  
 Խնամին եմ միշտ հակված,  
 Ես, որ համարում եմ այս ժամանակն իմը -  
 ի'մն եմ ուզում, ի'մ պապերից խլվածն  
 Ու ինձ ժառանգածը:  
 Ինչպես իմն է իմ սար Արագածը,  
 Այնպես իմն է իմ սրբասար Արարատը...  
 Ինչպես իմն է իմ հոյաշն Երևանը,  
 Այնպես իմն է իմ հնամեծ Անի՛ն...  
 Անցնի հազար տարի քեկուզ,  
 Իմ Վանն ու Ակնը  
 Ոչ մի դաժանությամբ ինձանից չեն հանի:  
 Միևնույնն է՝ իմը լինելու է իմը,  
 Ես ուզում եմ ի'մը -  
 Ամբո՞ղջ Հայաստանիս տանջազավթ մասերը...  
 Մե՛ծ է, անսահման մե՛ծ  
 Ինձ ժառանգած սերը:  
 Այն', այս ժամանակն իմն է...  
 Եվ այս ժամանակը  
 Պիտի արդարացնի պարտավոր հույսերս:

27.09.1984թ.

### ԻՆՉՔԱՌՆ ՀԱՎԱՏԱՑԻՆՔ...

(Բանաստեղծություն՝ 1988ի ցույցերում արտասանված)

Ինչքա՛ն հավատացինք,  
Որ կարող ենք արդեն տեր դառնալ մեր հույսին...  
... շավի առավել մնած  
Քար դրեցինք սակայն մեր բազմատանջ ուսին:

Դո՞ւ չուզեցիք նորից,  
Դո՞ւ չուզեցիք արդար մեր հավատը հաղթեր.  
Ու քողեցիք նորից  
Մեզ լիովին մենակ, մեզ լիովին անտեր:

Մենք ուզեցինք մերը,  
Մեր մոր սիրու ուզեցինք, որ կոչում է Արցախ...  
Մենք առանց մոր սրտի  
Ի՞նչպես ապրենք արդյոք, ապրենք՝ այն էլ ազա՛տ...

Պաշտպանեցիք նորից  
Անօրենին զավթող, անօրենին անգուք...  
Մե՛զ մեղավոր դարձրիք -  
Հորինելով վստահ հերյուրանքներ և սուտ:

Թողեցիք, որ նորից  
Ազա՛տ կարողությամբ լրիվ մեզ խարխլեն,  
Որ մեր եղած-չեղածը  
Ոխի հեգնաժայիտ իրավունքով խլեն:

Վա՛յ մեզ, որ կարծեցինք,  
Թե փոխվել են արդեն ժամանակները չար,  
Որ կհարգեն արդեն  
Մեր իրավունքը և ձայնը բազմաշարչար:

Զե՛, չի փոխվել ոչինչ...  
Զկա արդարություն, չկա՛, և չի հաղթի...  
Բախտի անիվը մեր  
Պատվում է նորից հակառակ մեր բախտին:

Ինչքա՛ն հավատացինք,  
Որ կարող ենք արդեն տեր դառնալ մեր հույսին...  
... Ցավի առավել մնած  
Քար դրեցինք սակայն մեր բազմատանջ ուսին:

22.03.1988թ.



354-2013

## ՃԱԿԱՏԱԳԻՐ ՈՒ ԵՐԿԻՐ

Այն պոետն եմ՝ հիմա ես իմ լրիվությամբ լիր առած,  
Աստվածային նշանաւության հաղորդումով գիր առած:

Պարզ է, պիտի լիներ ոճն իմ նախնիություն քարագիր...  
Ինչ փոխվում է, բայց չեն փոխվում նակատագիր ու երկիր:

Նույնն է սարը իմ Արարատ, ամպն է ձևով անցավոր.  
Ես ամպ չեմ, որ լինեմ հանկարծ փոփոխական հանցավոր:

Ես նախաստեղծ, թե չինեմ ժայթք-բողոքը իմ սրտի,  
Արհամարհող մի վայրկյանում ազգս ինձնից կսառի:

Ինձ չի ների բնությունը, թե բնույթը իմ խախտեմ...  
Թե խախտնցի, կխոռվի, չեմ ունենամ նման տեր:

Երբ երկիրս սարեղեն է՝ ուրեմն ես պիտի միշտ,  
Սար պաշտողի ուժ ունենամ, որ իմ ինկքը մաշեմ նիշտ:

Թե տվել է Աստվածը ինձ տարածքը այս զորընդեղ,  
Որ համարվում է Հայրենիք, ծննդավայր կոչվող տեղ -

Ուրեմն ես պիտի փրկեմ, և ոչ թե նա ինձ փրկի...  
Ով որ ունի մեծ սար՝ պիտի նրան ուժով իր գրկի:

Ով տալիս է երկնածավալ սարն ու աշխարհն օտարին,  
Նա քույլ է և անազգաւեր, անեներդաշնակ իր դարին.  
Երբ հանում է պահը արդեն օտարների օգնության,  
Ուրեմն արդեն ոչ թե ուժ ենք, այլ մեծ վկա հոգնության:

Այս բոլորը նիշտ է լրիվ, բայց ե՞րբ եմ ես եղել տեր -  
Ծնված օրից մինչև հիմա փրկություն եմ տենչում դեռ:

Ես Արարատ սար ունեցա՝ կորցրեցի, վա՛յ, ամոք-...  
Ա՛խ, Աստրծոն մոտ ես ո՞նց գնամ, և Աստված ո՞նց գա ինձ մոտ:

Իմ այս երգի սկիզբն ախր ուներ ուրիշ մի վիճակ...  
Ինչո՞ւ ծննեց սիրտս նորից հին ցավերի անցանք:

Այն պոետն եմ սակայն ես իմ նիշտ խոսությամբ լիր առած,  
Աստվածային նշանաւության հաղորդումով գիր առած...

Պարզ է, պիտի լիներ ոճն իմ նախնիություն քարագիր...  
Ինչ փոխվում է, բայց չեն փոխվում նակատագիր ու երկիր:

## ԵՎ ՀԱՐՑ, ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ

-Ի՞նչ է լինելու մեր ազգի վերջը...  
 -Թե լինի վերջը՝  
 Կիմի նաև աշխարհում վերջը բոլոր ազգերի:  
 Հողագունդն անշուշտ գնդակ է մի մեծ...  
 Եվ որտեղից էլ նա հանկարծ ծակվի -  
 Կիշնի, կդառնա ծումոված ոչինչ:  
 Չի' լինի աշխարհ  
 Ու ոչ մի տեսակ ապրող ազգություն:  
 Ասովածն համբերող իմանել է միայն  
 Հավասարության տարածքներ կենաց...  
 Եվ Աստծո համար չկա աշխարհում  
 Մեծ և փոքր ազգ:  
 Չի' լինի աշխարհ  
 Ու ոչ մի տեսակ ապրող ազգություն.  
 Թե լինի հանկարծ մեր ազգի վերջը:  
 ... Վերջացնե՛մ վեճը:

29.09.1998թ.

## ՆԱԽԵՐԳԱՆՔԸ ԿՅԱՆՔԻՄ

Գրեցի ես ոդիսականն իմ կյանքի,  
 Թափառումիս պատմությունը ոտքամաշ,  
 Ես գրեցի հայիս բախտը տարագիր,  
 Զարմացած, թե ինչպես եղա այդքան հաշտ  
 Տառապանքի ու կարոտի կրակում  
 Եվ ապրելու ինչպես գտա ես ակունք:

Ես ԱՅԻԻց՝ չարի ձեռքով վտարված,  
 Սակայն չեղա մի վայրկյան ես մուրացկան.  
 Ինչքան էլ որ կեղեքառը, վթարված -  
 Ինձ չտեսան մշտավիատ ու լացկան...  
 Ուր էլ եղա՝ դրեցի հիմք կեցության,  
 Վառ պահելով անունն ազգիս մեծության:

Ես ԱՅԻԻց հասա Ղրիմ, Ղրիմում,  
 Իմ հայահոտ շեն ու դաշտով բազմացա,  
 Վաճառական եղա անգամ ես հմուտ,

Դպիր-գրիչ՝ աստվածությանն համաձայն...  
Ես լսեցի հայ մանչուկի անուշ ձայն,  
Որի սրտում նույնպես Անին արք-նացավ:

Բայց այդտեղ էլ չարի ճեռքը ինձ հասալ,  
Նորից դարձա ես անտուն, անապաստան,  
Նորից եղավ ինձ ապրելը երազանք...  
Փովեց իմ դեմ մի ամայի տափաստան...  
Դոնի ափին, ուր որպես շունչ, որպես ձայն,  
Վրնջում էր միայն քամին սանարձակ:

Ու ես այստեղ, սովորույթով իմ համառ,  
Արարեցի քաղաքն իմ նոր Նախիջևան.  
Ցնդեց կարծես չարքաշության մուժը մաս,  
Ես ունեցա վանք ու բարենվ օքեան.  
Ու ապրեցի այստեղ էլ շա'տ տարիներ...  
Իմ հացի մեջ խառնվածը բարին էր:

Սակայն հետո, շեկ ծովի մեջ ալեկոծ,  
Դարձա արդեն տաշվող-մաշվող թուխ կղզի...  
Բայց փառք Աստծո՝ լցվեց կյանքս գալիքով՝  
Լուսապսակ իշավ կանչող երազիս:  
Ու կատարվեց արցունքամեջ տենչանքն իմ.  
Ես ուր հարյուր տարի հետո  
Վերադարձա հայրենիք...  
Թեև նորից հեռու մնաց իմ Անին,  
Թեև նորից նույնն էր, նույնը  
Անի՛ս, Անի՛ս, Անի՛ս զավթած վայրենին:

Բայց խնդումս հուզակո էր, հուզավառ.  
Զէ որ արդեն կանգնած էի իմ հողին,  
Զէ որ գտավ իմ տառապանքը ավարտ -  
Ես օրինեցի իմ արևն ինձ տվողին  
Եվ իմ երկրում, օ՛, սուրբ երկրում իմ,  
Ես գցեցի իմն համարվող նոր տան հիմք:

10.10.2002թ.

### ՀԱՍԿԱՑԱ

Տուն շինեցի, Աստված փորեց հիմքը իմ տան.  
Ինչքան փորեց՝ այնքան եղավ խորքը հիմքի,  
Դրեց որմ' վերաշնորհ ձիրքով արդար...  
Ինձ չհաղթեց վայրիությունն արհավիրքի:

Դաշտն իմ խոպան, առաջինը Աստված վարեց,  
Կապեց մեջքիս գոգնոց, լցրեց ցորենի հունդ...  
Շինեց Աստված իմ օշախն ու կրակ վառեց.  
Եփեց կրակն հաց ու փուլեց կյանքի բուրմուճք:

Շեմն իմ պահողն առաջինը եղավ Աստված.  
Նա նվիրեց ինձ տուն ու տեղ, կենաց երգեր...  
Կյանք էր՝ և սեր կարուրությունը ինձ տված.  
Ո՞վ կարող էր արդյոնք նրա կամքը հերքել:

Ինչ որ պետք էր՝ նա կամեցավ, սակայն մի օր  
Վերադարձի պահանջն անհուն նրան հաղթեց...  
Նա ներշնչչեց կապույտի մեջ երազախոր,  
Իր ծննդյան տարածքների նամկուվ գաղթեց:

Ու երբ գնաց պահապանն իմ, Աստվածը իմ...  
Հարձակվեցին տուն ու տեղս նվաճողներ.  
Ես խնդրեցի, որ Աստված գա, փրկի չարից տվածը իր -  
Իմ սեփականը հաստատող տարածքն հողեւ:

Ես խնդրեցի, բայց նա չեկավ... և թշնամուս  
Տված ցավի անհուն խորքի մեջ հասկացա,  
Որ երեկով իմ արարումն աստվածամուսք  
Սկիզբն էր շեն, ոչ թե նաև գալիք ընծաւ:

Տուն շինեցի, Աստված փորեց հիմքը իմ տան...  
Բայց ինձ քողեց հնարքը տուն պաշտպանելու.  
Ես հասկացա, թե ամեն ինչ ինձ ինքը տար -  
Ոչինչ կարծես թե չէր մնա ինձ անելու:

Տուն ու տեղդ պահպանելու հնարքն, այն',  
Ինքո պիտի արարեիր կուռ մաքառմամբ,  
Որ թշնամիդ, քո գոյությանն հեռվից նայող,  
Ամենին չդառնար ուժ քեզ կործանման:

Ու հասկացա... հասկանում եմ արդեն ես լավ՝  
Չէի այդքան դարուդարեր ոչնչանա,  
Չէի դառնա այդքա՛ն կորցրած, այդքա՛ն ջլատ,  
Լիներ թե իմ սիրո կողքին սուրն անխնա:

### ԴԱՐՁԻՐ ԱՅՍՐԵՐԳ

Աստվածամերձ իմ Արարատ,  
Դարձիր այսրերգ...  
Մեր քարենին ծովը  
Շարժիր հսկայամեծ ու անհամբեր,  
Ճզմիր արյունախում մեր քշնամուն:

Շարժվիր, շարժվիր արդարություն մեր մեծ,  
Իմ մտածման փրկիչ հազարերորդ...  
Ամեն մի հույս իմ ուղեղը քամեց...  
Փա՛ռք Աստղծո, հույսով եղա դեռ հորդ:

Ախ, երանի, իմ սար, դառնաս այսրերգ -  
Հանգիստ ու պար ճգմես  
Դիվածանգ չարքը այդ խիտ...  
Ու ես տեսնեմ եեսոս  
Ոնց ես դու բարձրանում ավելի վեր,  
Իմ Արարատ, որպես փրկազոր խինդ:

*05.05.2004թ.*

### ՕՐՆ ԱՅԴ ՄՈՏ Է

Հիմա հայրենիքն իմ ի՞նչ է -  
Մի կտոր քար կպած հողագնդին...  
Բայց պատմություն է նա  
Մեծ ու ընտիր:

Այսքանը շա՛տ է ճիշտ...  
Նպատակս՝ բնավ  
Վերադարձնելը չէ իմ ցավերի,  
Սակայն ասեմ  
Շուտով և շա՛տ շուտով,  
Դժգոհ տիեզերքը  
Երկիրն այս կավերի...

Եվ անպայման, իմ երրեմնի  
Մեծ հայրենիքը զավթողն էլ  
Կդառնա հրահնս գեհենի կեր:  
Օրն այդ մոտ է, մոտ է.  
Համարյա եկել է:

*20.07.2004թ.*

## ԶԻ՛ ԵՐԵՎՈՒՄ ԶԱՐԻ ՎԵՐՁԸ

Ասում են՝ կա ավելացում...  
 Միշտ լսեռով այդ բառը ես՝  
 Ուրախանում եմ քե մի ֆիչ,  
 Բայց բախծում եմ ու շա՛տ բախծում:  
 Նախ աշխարհից ներողություն...  
 Մտածում է՝ նախ պրետն իր  
 Ազգի մասին.  
 Պոետի մեջ ի՞նչ կա՝  
 Միայն ազգային սիրտ...  
 Ի՞նչ է եղել այս աշխարհում.  
 Թե եղել է ամեն ազգի ավելացում,  
 Բայց իմ ազգի համար՝  
 Միայն պակասացում...  
 «Պակասություն» բառը ողբն է  
 Հենց իմ ազգի:  
 Զեմ ուզում ես հիշել նորից  
 ի՞նչ մեծ ազգ ենք եղել  
 Եվ ի՞նչ Աստրծոն երկիր...  
 Սակայն արդեն ժանի դար է  
 Մենք ապրում ենք պակասություն:  
 Եթե կուզեմ նիշտ իմանալ՝  
 Եվ ոչ մի ազգ չի ունեցել  
 Մի այդպիսի հակասություն:  
 Զեմ ուզում ես հիշել նորից,  
 Թե ինչ մեծ ազգ ենք մենք եղել,  
 Աստրծո՞ ի՞նչ դրախտ երկիր:  
 Բայց ո՞վ էր, որ հրամայեց,  
 Որ իմ ազգը,  
 Ինչ որ մի ազգ, քոչվոր մի ազգ,  
 Խենեշությամբ մարդագայլի -  
 Տուն ու տեղից՝ եղեռնահողմ գար ու զրկեր...  
 Բացը դաժանը այդ օձընկեց -  
 Ինձ գոյության իրավունքից  
 Ոչ քե միայն գոյազրկեց,  
 Այլ աշխարհի ամեն ազգի՝  
 Իր կեղծությամբ ստանարայիկ, ամոքազուրկ,  
 Աստրծոն պարզե երկիրը իմ՝  
 Որպես էթիկ՝ իր սեփականը համարեց:

Եվ ազգերն ինչ, շատերն անխիղն,  
 Հանուն իրենց կարգ ու շահի,  
 Կաշառատու քննարար  
 Մեր ոստիկն դարձան ոչ միայն կարեկից,  
 Այլև ընկեր...  
 Յար-աղանով մեզ մորք-ողն ու տիրողները  
 Առավելս դարձան պարարտ ու դարձան գեր:  
 Եվ ի՞նչ, և ի՞նչ, թե օրենքով անխնության  
 Երկրիս գերողն ազգավայրագ դահին է թե,  
 Բայց առավել են սոսկալի  
 Դաժանագոր, զավթողազոր երկրների  
 Արդարախնեղ գահերը տեր:  
 Անամոք են, ի՞նչ անամոք...  
 Օ՛, անամոք պոռածիկն անգամ  
 Այդքա՞ն լպիրշ անամոք չէ:  
 Թուրքը զավթեց երկիրս ու  
 Ազգս կերավ,  
 Բայց տիրակալ կոչվածները  
 Այդ գենենին՝ շահախորհուրդ ընկեր են ջերմ...  
 Եվ չինեն ինչպես ընկեր,  
 Երբ երանք է՝ ազգ ուսելով են  
 Դարձել գեր:  
 Զի եղել և չի լինելու,  
 Որ երբեմ՝ շունը շանը դավաճանի...  
 Պոռնկությունն այսքան զազիր  
 Կարող է դեռ արդար մարդկանց  
 Ուղեղների մեջ տեղ չունի:  
 Է՛, ինչ ասեմ... չունի հայը,  
 Բախտ էլ չունի մի մրցյունի:  
 Ես պարտավոր -  
 Մտածում եմ թե օրնիբուն ազգիս մասին,  
 Այրվում թեկուզ մտածելով,  
 Որ շատ ազգեր նոխանում են, ավելանում,  
 Խսկ մենք չունեն ավելացում,  
 Որ շարունակ, ավելացողը առավել  
 Տառապանք է ընծայում և աղի արցունք.  
 Նաև, նաև խարողների ավելացում,  
 Բոռ բուրքերի ավելացում,  
 Որ դառնալով խորք ու տարածք  
 Ծածկեն այն, ինչ որ եղել է,  
 Եվ աշխարհին ամեն գնով հավատացնեն,  
 Որ չեն զավթել երկիրը իմ,

Որ չի եղել դահնակացին ու եղեռնը:  
 Ո՞ւմ պետք է, որ մեր եղածի, քիչ եղածի  
 Շատն սիյուռքն է...  
 Ու պատիկ մի հայրենիք:  
 Եվ չեն ուզում այդ մի պութուրն էլ շենանա -  
 Կախաղանի սե-օս օղակ այդ վայրենիք:  
 Ոչ ո՛ք, ոչ ո՛ք, ոչ մի օրենք  
 Զի վեր կենում ու չի ասում,  
 Որ վերջապես ի՞նչ եք ուզում  
 Դուք հայ ազգից...  
 Մի՞քե չկա ոչ մեկիդ մեջ խղճի կաթիլ.  
 Էլ ինչպե՞ս եք համարվում դուք  
 Ազգամեծեր, օրենքների արդար պատիվ:  
 Հիմա եկելի...  
 Քսանմեկերորդ դարի մեջ ենք չփոփոխվող,  
 Արդար ցասմամբ՝ պահանջների դարձյալ վե՛ն ենք,  
 Մերը, ախ, մերը լինելու բողոքախոս վե՛ն ենք, վե՛ն ենք...  
 Մեզ միշտ խարի ու խարում են.  
 Երբեք չի երևացել  
 Ու հիմա էլ չի երևում չարի վերջը:

13.08.2004թ.

## ԿԱ. ՄԵՐ ՀՈԴՈՒՄ

Կա մեր հոգում, կա մի երկիր  
Դրախտազոր ու գերող,  
Ծիրանահամ բռւյր ու բերքի  
Ազգավայել պատկերով:

Կա մեր հոգում հավատ - գինու  
Մեռոնաեն արքեցում,  
Բարիենով լի արև-սինու  
Շողահրճվանի լիացում:

Կա մեր հոգում՝ լավաշարաց  
Արդարություն աստղագիր,  
Եվ փրկության մեծ ճանապարհ -  
Անոռւնների տարագիր:

Կա մեր հոգում՝ շանթ - շառաչը  
Վիշապաբաղ Վահագնի,  
Որ միշտ ցնդի վախն, հառաչը,  
Որ լույսը սև չհագնի:

Կա մեր հոգում՝ հայահավագ,  
Հայաստանված Մասիս սար,  
Մեր կեցության բարձունքն ավագ  
Աստվածությանն հավասար:

*22.12.2005թ.*

### Ի՞նքն է ՌԻՆԱՑՆ...

Նա՝ ով ասում է, թե  
Ամեն ինչն է ունայն.  
Ինքն է ունայն...  
Որքան էլ դեռ  
Խմաստուն ու խորիմաստ  
Ճշմարտություն համարեն այն:

Ես ապշածս -  
Ստեղծմամբ այս տիեզերքի՝  
Մի կես վայրեցան անգամ  
Երբեք չեմ հերքի  
Գոյությունը  
Բազմազարմանք այսքան...  
Քանի Արևը կա, աստղերը կան,  
Քանի կա շարժումը շրջապարգև -  
Ես չեմ կարող Աստրծոն  
Արարչությունը չհարգել...  
Ես չեմ կարող մահի  
Եղելությամբ ասել անձնամիտում,  
Թե ընդունայն է ամեն ինչ:  
Ճիշտ է, կա, մահը կա,  
Որով դառնում է  
Շնչավորն հավերժանինչ:  
Ճիշտ է, չարություններ միշտ կան -  
Որքա՛ն ուզես, որքա՛ն,  
Դժոխային տառապանքներ՝  
Որքա՛ն ուզես, որքա՛ն.  
Բայց կա՛ նաև՝ կա կյանք արևընծաւ,  
Որ, ճեղքելով ամեն սարսափ,  
Բնրում է խնդություն, ժպիտ ու սեր,  
Որ դահնության առաջ  
Ծնում է հասկ շողաճառագ,  
Մահվան դիմաց դառնում  
Ապրող, շարունակվող, երշանկություն  
Ու զանգություն  
Զգողական պայծառ հավատների...  
Հաղթանակով Աստրծոն  
Բազմատեսք ու անհատնելի:

Նա՝ ով ասում է թե  
Ամեն ինչն է ունայն.  
Ինքն է ունայն...  
Որքան էլ դեռ  
Խմաստուն ու խորիմաստ  
Ճշմարտություն համարեն այն:

## ԵՎ ՊԱՐՈՒՄ ԷՒՆ

Երեք օր արդեն փրկել Շուշին ու,  
 Կարծես դժոխմից փրկել մորն իրենց,  
 Քեզ էին անում բաջերն հայկագուն,  
 Եվ հաղթանակ էր  
 Զենքի փոխարեն զորեղ որոտում  
 Ու Շուշկա անտակ ձորով խորախոր  
 Էլ ոչ թե ողբ, այլ  
 Խնդրության ճայնն էր հեղեղված հորդում...  
 Երեք օր էր, որ տղերքը զինվոր,  
 Բերդ-բերդ տղերքը ուսուսի տված  
 Պարում էին հաղթ, պարում բոչարի:  
 Ու հեռացել էր, հավետ հեռացել  
 Շունչն ու ստվերը նզովյալ չարի:  
 Պարում էին հաղթ.  
 Սակայն որտեղից... ևս էլ չիմացա  
 Որտեղից եկավ ու լցվեց իմ մեջ  
 Մի հորդ ցանկություն,  
 Թե տղերքն այդ բաշ, փրկառն ու բաշ,  
 Ինչ պապերից ու ինչ տեղից էին  
 Ճառագած սերում:  
 Ու պարում էին,  
 Պարուրված փառքի ու արդարության  
 Մայիսապարզն շողի ու լույսերում:  
 Եվ պարզվեց, պարզվեց, որ կար, նաև կար,  
 Տղերքի մեջ կար Կանի շառավիղ,  
 Եվ ժառանբորդներ Սասնա ու Մուշի...  
 Թեժավառվում էր սրտերում նրանց  
 Հավերժարորդներ վրեժը անմար  
 Վրեժը ցասման փրկարար ուժի:  
 Խմբերգում էին նրանք կայծակոտ,  
 Որ արդեն Շուշին սկիզբն է զորեղ  
 Հաղթանակների, պայքարների նոր,  
 Որ կգա', կգա', շուտով կգա օր,  
 Որ առավել զոռ կպարեն նրանք  
 Երենց պապերի ազատված երկրում,  
 Որ ունեն արդեն Աստծո օրինությամբ  
 Փրկազոր զենքեր իրենց ձեռքերում:  
 Ու պարում էին, որոտում էին նրանք կայծակոտ  
 Եվ Շուշկա անտակ ձորում խորախոր  
 Էլ ոչ թե ողբ, այլ,  
 Խնդրության ճայնն էր հեղեղված հորդում...  
 Արցախյան կապույտ երկնեֆից ազա'ն  
 Արևն էր ժպտում,  
 Ինչակա ժպտում է կարտած մայրը  
 Իր զինվոր որդուն, հաղթապահծ որդուն:

19.03.2007թ.

### ԶԳՈՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՎԱՏԱՑԵՔ

Ո՞վ չտեսնող ազգեր, տեսե՛ք,  
 Գոնե գերված Արարատով տեսե՛ք, տեսե՛ք,  
 Աստեղնամու բարձրությունը մեզնից խլված  
 Ու հասկացեք գոնե մի ժիշ,  
 Թե ինչու է աշխարհով մեկ հայը ցրված,  
 Թե ժպտում է, բայց ինչու է նրա սրտում  
 Դաշույնի պես ցավը խրված:  
 Մի՛, երբեք մի՛ հավատացեք  
 Խարողավարժ քուրքի խոսին,  
 Եղե՛ք, եղե՛ք ստուգախիղճ,  
 Որ միամիտ կուլ չգնաք, որ չսուզվեք  
 Հնարանեռով ճշմարտությունն այլափոխած,  
 Վարպետորեն հավատացնող, վարպետորեն ստարարո  
 Խորության մեջ իրեն հատուկ է ժնահոսքի:  
 Հանուն շահի մի՛ քողեք, որ  
 Արդարություն բառը մեռնի...  
 Մի՛ քողեք, որ քուրքը, ընդմիշտ մեղքատարած,  
 Դարձի չեղյալ, մոռացություն՝ իր ոճրագործ -  
 Եղելությունն հայ-եղեննի  
 Իր արարած եղեննը նա ժխտում է քե,  
 Ինչո՞ւ հապա՝ չարքով դարձրած բաժանարար,  
 Մեր Արաքսից, մայր Արաքսից,  
 Այն կողմ, ա՛յն կողմ  
 Զավթած ամբողջ Հայաստանում,  
 Աստվածատուր Հայաստանում,  
 Զկա՛, չկա՛ գոնե մի հայ...  
 Թե եղեննը սուս է իրավ՝ ինչո՞ւ չկա:  
 Բայց զարմանեք է, որ կան գոնե հազարից մեկ՝  
 Դեռ չեղծված, չքուրքացված -  
 Հազարադար մեր պատմությունն ընդարձակող -  
 Տարածքազոր անուններից հայավկա:

Ո՞վ միամիտ, կամ անտարքեր նաև՝ ազգեր,  
 Ոչ խորամուխ. թե հավատաք  
 Բազմավարժ ու հազարան նպատակով կեղծող, եղծող  
 Ճարպկասուտ քուրքի խոսին,  
 Թե հավատաք ու չփակեք  
 Զազրավարք ստի նամիան,  
 Հավատացեք, որ կստեղծի քուրքը անշուշտ  
 Ազգաշնջման նոր անապատ,  
 Միջնավելով Եվրոպա նա -

Նոր վարքությամբ կտարածի իր բնույթը դահճահնար:  
 Հավատացեմ և ստիպեմ աշխարհաճայն,  
 Որ դահճամեծն այդ սոսկալի, ահավորից էլ ահավոր -  
 Թեկուզ այսի՞ն ուշացումով,  
 Ընդունի իր մեղքն անպարտակ՝ եթե ոչ մեր,  
 Գոնե Տիրոց՝ Աստըծո առաջ:  
 Հավատացե՞մ, զգանությա՞մբ հավատացեմ,  
 Որ մի օր էլ  
 Հայի բախտին չարժանանա և բախտը ձեր:

Մրտապահանջ իմ ցավախոսքը այսանով  
 Կարող էի ես ավարտել,  
 Բայց մի ուրիշ ոչ պակաս ցավ  
 իմ սրսում մենքն արքնացավ,  
 Ինձ անհամբեր հուզեց արդեն ուրիշ մի ողը...  
 Ուզում եմ ես նաև հիմա,  
 Ժամանակի անցյալությունը պահպանած -  
 Դուք ձեր արյան ձայնը լսեմ,  
 Մտաքերեմ պատմությունը եղելությամբ նշմարտախոս:  
 Գիտեմ անշուշտ, նա կասի ձեզ  
 Զորեղությամբ կասի հուշող.  
 -Այս աշխարհը դեռ այնքան էլ  
 Հին չէ ու ծեր, մի քանի դար առաջ էր դեռ,  
 Որ այս՝ Մուրքիա կոչված տնրում  
 Բյուզանդիան էր, որպես հզոր պետությունը  
 Աշխարհասիրտ, երկրակենորոն,  
 Պետություն, որ մեզ նման, մե՞ր,  
 Հիսուսազոր պաշտամունքով, տանարներով տիրավայել -  
 Երկնատարած փառքի հասավ,  
 Պետություն, որ միասնացած կյանքությունն էր  
 Հոռմի և Հունատանի նարտարամիտ...  
 Ո՞ւր է, ո՞ւր է, ինչո՞ւ չկա այժմ, հիմի:  
 Թե հարցնեմ ինքներդ ձեզ՝  
 Կարագանքվի ձեր մեջ անշուշտ  
 Հեռու հեռվից ու խորքածայն՝ ո՞ւր է, ո՞ւր է...  
 Եվ կհառնի ձեր հարցնող հայացքի դեմ  
 Մահաքրից դժոխածին այն ուրուրը,  
 Որ աչքախն ցին էր նաև, ծվատող ցին,  
 Այդ ցինն հետո կդառնա սև շանթի պացք  
 Ու կդառնա առաջնորդողն հեղեղան հորդաների,  
 Որ մեկտեղված, հավաք անվամբ, կոչվում էր քուրք:  
 Զէ՛, չի՛ կարող, որ չսեմ...

Ձեզ սարսափը կլսեցնի, կլսե՛ք դուք  
 Վայրիախուժ, հողմագալար մի աղաղակ,  
 Եվ ամեն ինչ՝ սմբակակոխ,  
 Սմբակածեծ, ձիախրինինց կավերակվի...  
 Մահակայծակ յարաղանով կմորթ-վի  
 Մի պետություն, մի երկիր, որ գոյություն էր  
 Իր հունախոս, մեծահամբավ,  
 Ազնվարար նարտարությամբ,  
 Աստվածաշունչ վարք ու բարքով շրջատարած,  
 Խմաստությամբ պատմախոսի,  
 Աշխարհաշուրջ կարողությամբ ծովածավալ,  
 Նաև ուժով՝ ասպետության ուշիմությունը գրավող.  
 Հնոց փառքով և բանավոր, և գրավոր,  
 Բայց այդ հողմը, քուրքահողմը,  
 Եկած անհուն չարախորհուրդ հեռուներից,  
 Կոտորեց ու դարձեց ոչինչ, մեզ նման, մե՛ր,  
 Էրեմիկ, էրեմիկ արիազարմ, ազնվարյուն մի ժողովուրդ...  
 Կոտորեց ու չհեռացավ,  
 Նյութեց եղեռնը առաջին, երրևիցեւ չտեսնված,  
 Քանզի աշխարհն իր գոյության ողջ ընթացքում  
 Ազգաշնչման նման զարմանք դեռ չէ՛ր տեսած...  
 Եվ աշխարհը տեսա՛վ, տեսա՛վ -  
 Մի ժողովուրդ հիսուսապաշտ, շեմազարմանք,  
 Դարձակ մորթված, արյունի գետ  
 Ու շրջակա ծովերն հոսեց:  
 Տեսա՛վ, տեսա՛վ, քեւ Բյուզանդիոն տեղում ինչպես  
 Ոճրատարած քուրքը դարձակ տիրակալ ու  
 Հունաց անտիկ ոճի տեղակ արդեն  
 Թուրքերենը միայն խոսեց:  
 Եվ ի՛նչ եղավ արդեն և ի՛նչ,  
 Որ մորթելով՝ երկիր զավթած սովորածը -  
 Հետզիեսե զավթեց նաև երկիրը մեր,  
 Արդեն վարժված մեզ էլ մորթեց  
 Առավել խև իր դահճությամբ:  
 Ու մենք դարձանք սուկազարմանք երկրորդ եղեռն:  
 Բայց ավելի մեծ զարմանքն այն է հիմա,  
 Որ Բյուզանդիա ու Հայաստան  
 Զավթածները հավատացնում են աշխարհին,  
 Որ այդպիսի քանի չի եղել,  
 Որ չեն զավթել ազգավայել տերություններ,  
 Որ էրեմիկ են իրենք, էրեմիկ,  
 Որ նոյնի հետ Արարատի սուրբ գագարից են իշել վար:

Ահա այսպիս, զրպարտությամբ մտքախավար  
 Համոգում են, որ օտարը մենք ենք, ու մեզ  
 Տեղապարզեցն ապրելու բախտ են շնորհել:  
 Ո՞վ մարդկություն, ազգե՛ր, եթե  
 Կոչվում եք դուք ազնվական, ազնվատեն,  
 Պիտի ուրեմն փաստամեծ եղելությանը հավատաք,  
 Որ մենք անվերջ արդարություն բառը չատենք,  
 Չասենք, չկա արդարություն...  
 Երբ սկիզբ է առել արդեն նոր դարություն,  
 Թող մեր փակված բախտի դուռը  
 Այս նորընծա դարով բացվի,  
 Բարո՞վ բացվի:  
 Մեր ցիրուցան ազգը դառնա միահավաք,  
 Որ ունենանք մենք էլ անզ պես  
 Ամբողջազոր հայրենիքում ապրելու բախտ,  
 Որ ցամաքի մեր ցավությունն արցունքածով,  
 Որ աշխածակ շահը ընդմիշտ  
 Ցոքգլխանի դև չդառնա,  
 Որ մերը մեր անվամբ կոչվի Արարատով,  
 Որ վերջապես կամքն Աստրծոն  
Դառնա հաղթող:

*27.01.2008թ.*

### ՄԵՇ ԱՇԽԱԲՀ ՆՈՐ

Մարդիկ, մարդիկ ազգատարբեր, բազմալեզու,  
 իրենց անհագությամբ ախորժատենչ,  
 Արարչությամբ անհանգիստ ու տարաբնույթ,  
 Որ առավել բազմացնում են  
 Զենքագորեղ չարիք, քան բարություն  
 Սլացքներով ահակործան մնո՞ի...  
 Դարձնելով նյութը նպատակի տիպար,  
 Գերագույն դարձնելով ուժը չարի՝  
 Ծախսում են այս հողագունդը:  
 Բայց ես աշխազքաղ տեսնում եմ -  
 Հեռվում, անհունանոր հեռվում,  
 Խանգարիչ ամեն տաժանքի դեմ  
 Հաղթագոր շարժելով իր մկունդը -  
 Լուսարուխ Աստվածն ստեղծում է  
 Տիեզերագարդ կյանքի  
 Նորահրաշք մոլորակ-հունդ,  
 Հունդ, որ պիտի ծլարակվի մարդակերպար  
 Կատարյալի բազմանառագ, բարեհնար առատությամբ...  
 Չի՝ պտտվի երբեք՝ երանական արևակի  
 Շուրջը ոչինչ՝ մի պահ անգամ՝ մնո՞ի արատությամբ...  
 Եվ լինելու է մարդը չարից զերծ -  
 Հավիսյան հավիսենից:  
 Չի ծնվելու չարի և ոչ մի հնարանք.  
 Լինելու է այն բացակա հեռու  
 Նորամարդկանց բարերախտիկ սրտից:  
 Ես տեսնում եմ -  
 Արարչությամբ նորագարմանք, գերահզոր,  
 Ոչնչություն դարձրած ամեն տեսակ գեհենություն՝  
 Լուսարուխ Աստվածն ստեղծում է  
 Տիեզերագարդ կյանքի  
 Մեծ աշխարհ նոր -  
 Հավերժության միայն,  
 Միայն՝ մարդագմամբ կատարյալ ու եղեմային,  
 Արգելելով այսօրինակ նանապարհը մահի:

10.08.2009թ.

## ԱՐՄԻԿԸ

Երբ, շողարձակ, նոր լուսաբաց  
Ավետեց արիին,  
իմ արծիվը վերադարձավ,  
նստեց քարափին.

- Դու ո՞ւր էիր, -ասացի ես,-  
Ո՞ւր էիր, արծիվ,  
Գիշեր ու զոր նայում էի  
Քո վերադարձին:  
- Ախ, ընկեր իմ, - նա հառաչեց,-  
երգիր գնացի.

Ինձ Մարութա սարը կանչեց...  
Թռա՛, գնացի:

Տեսա սարս, վրան ամպեր՝  
Ամպրոպի ծարավ...  
Ինձ որ տեսան, ամեն ամպից  
Կայծակը քռավ:  
Չդիմացան ո՛չ սար, ո՛չ ամպ,  
Ախ, իմ հետ լացին,  
Կարոտ էին նրանք անչափ  
Իմ վերադարձին:

Բայց որոտաց զենքի պայթյուն,  
Չարկամ որոտաց,  
Արյան ծխով լցվեց հետո  
Տիեզերքը քաց:

Սար ու ամպեր տխուր ասին.  
«Մեր ախպեր արծիվ,  
Քեզ կզարկեն ահեղ զենքով,  
Գնա՛, հեռացի՛ր»:

Տեսա՛, դեռ շա՛տ են քուրքի մեջ  
Չարության դավեր,  
Ամպի շանքից էլ առա քև  
Ու սուրացի վեր:

Վերադարձա, ոնց տեսնում ես,  
Տեսա էղքան բան,  
Բան չի փոխվել, քուրքը էլի  
Թուրք է ոնքարան:  
Էլ չխոսեց ու լոեց նա  
Որքի պես անտեր.  
Նրան այդքան խոր վշտի մեջ  
Չէի տեսել դեռ:

Սակայն նրան զվարք-աջերմ  
Զայն տվեց արփին.  
-Ծուտո՞վ, - ասաց, - լո՞ւյս կրացվի  
Նոր դարձիդ ճամփին,  
Սև ագռավը էլ չի բառի  
Քո բնում ավեր,  
Դու կճախրես քո հարազատ  
Սիփան սարն ի վեր...  
Ու կիռվեն Մուշ ու Սասուն  
Քո ճախրի ներքո,  
Քո բնի մեջ կրազմանան  
Նոր ձագերը քո:  
Ծուտո՞վ, արծի՞վ, գնալո՞ւ ենք...  
Պի՞նդ պահիր ֆեզ, պի՞նդ...  
Թռավ արծիվն ու պացավ  
Արևը դեպի:

*20.09.2009թ.*

## ՏԱՏՎԱ ՎԱՐԴԱՆՈՒՇ

Նորից քեզ կիշել եմ,  
 Տա՛տ իմ, ի՛մ ցանկալիս...  
 Լուսնկա գիշեր էր,  
 Դոնից զով էր գալիս:  
 Ցածրիկ ցանկապատի  
 Դոնակի մոտ փայտե  
 Քեզ գրկեցի, տատ իմ,  
 Տաքուկ, կարոտաք:  
 Տատ իմ, քեզ գրկեցի,  
 Ասի. -Մնա՞ս բարով.  
 Եվ դու հեկեկացիր,  
 Լացիր մեր բարբառով.  
 -Հորդ, - տակիր,- տղուս  
 իմ տեղս կպագնես,  
 Կըսես՝ ժամս, օրըս  
 Անվերջ կկանչին քեզ...  
 Տա՛տ, երբ որ տուն հասա  
 Համբուրեցի որդուդ,  
 Ասի. «-իմ շուրբերով՝  
 Մայրդ է համբուրում...»  
 Կատարեցի խոսքդ.  
 Ախ, իմ հայրը, տա՛տ իմ,  
 Ծերուն որդիդ լացեց:  
 Ու ես էլ լաց եղա,  
 Ախ, լայիս էր հայրս,  
 Որպես խեղճ երեխա:  
 Հարցնում էր աչքաքաց.  
 «Ո՞նց էր, ո՞նց էր տատը.  
 Ախ, ես ի՞նչ որդի եմ,  
 Ախ, ես շա՛տ եմ վատը:  
 Գնալու տեսնելու  
 Հնարանք չեմ գտնում,  
 Ու տարիներն եսպես  
 Լուսանում են, մթնում»:  
 Խարեցի հորս, տա՛տ,  
 Ասացի, որ լավ ես,  
 Չասացի՝ տանջում է  
 Քեզ ծերության ցավը...  
 ... Ռոստովամերձ Զալքը  
 Անիախոս գյուղից

Լուր եկավ, տա՛տ, որ դու  
 Փոխել ես քո ուղին,  
 Գնացել է արդեն  
 Հոգիդ հեռո՛ւ, երկի՛նք...  
 Որ ոչ մի դեղ չօգնեց  
 Քո սրտախոր վերքին  
 ... ինքնաթ-իռով, տա՛տ իմ,  
 Թռանիք, հասանիք Զալթր...  
 Ցամաք պառկած էիր  
 Դագաղի մեջ անշունք:  
 Քնած էիր, տա՛տ իմ,  
 Բայց աչքդ էր արքուն...  
 Մի աչքդ ճամփի էր,  
 Մի աչքդ չեր փակվում.  
 Աչքդ տեսավ հորս,  
 Աչքդ հետո փակվեց.  
 Ու լաց եղավ հայրս,  
 Քո դագաղին հակվեց...  
 Ապրում էինք, տա՛տ իմ,  
 Հայրենիքում թեկուզ,  
 Սակայն անսահման էր  
 Ցավ-կարոտը հոգու:  
 // Տաստ իմ, դու Անիից  
 Դարեր առաջ գաղթած.  
 Սակայն ապրել էիր  
 Քո հայութ-յամբ հաղթած:  
 Մի՛շտ հայերեն հնչեց  
 Անունդ Վարդանուշ...  
 Դու իմ կարոտ անհուն,  
 Դու սրբազն իմ հուշ:

28.09.2009<sub>p.</sub>

### ՓԱՓԱԳ

Հայրենիքից հեռու եմ, ա'խ...  
 իմ տեսչավառ օրը երբ գա,  
 Որ Արարատ սարը կանչի,  
 Որ հայրենիք տանի նամփան՝  
 Կդանամ նորեն պարտիզպան:  
 Որպես համառ շարին ընդդիմ՝  
 Ես կտնիեմ այգիս եղեմ:  
 Ու կկանչեմ. -Եկե՛ք, հավե՛ր,  
 Մեջն իմ այգու,  
 Երգե՛ք անուշ սերն ու բարին,  
 Բույն դրեք իմ ամեն ծառին.  
 Թող ձեր բնում ամեն մի ձագ  
 Դառնա նախրող արևածագ,  
 Ախ, եթե իմ բախտը բանի՝  
 Ունենամ կյանք պարտիզպանի -  
 Ես կհատեմ ժար ու կապան,  
 Կրանամ լույս ջրի նամփան  
 Ու կկանչեմ. -Ջրե՛ր ջան, դո՛ւք  
 Մտեք այգին իմ նորատունկ...  
 Որ տա այգիս շիմշատ շվեր.  
 Դալարաք-և բարձրանա վեր:  
 Կկանչեմ. -Ա՛յ հովե՛ր, եկե՛ք,  
 Մառերին իմ փարվեք, երգեք,  
 Թոշուներիս հետ համերգեք,  
 Ձեր խաս ձայնով շարիքն հերքեք,  
 Թող արքնացմի զով ձայնը ձեր  
 Գարնան ծաղկունք -  
 Դառնա այգիս երանազուգ...  
 Եկե՛ք, հովեր, երգե՛ք, հովե՛ր,  
 Որ հետո էլ ամառը գա,  
 Որ արևի ծիծուն պարով  
 Լցվի այգիս բույր ու բարով...  
 Եկե՛ք, հովե՛ր, որ հետո էլ  
 Աշունը գա,  
 Որ արևը այս անգամ նոր  
 Վառքով ցնծա,  
 Որպիս արրշիո գումեղություն  
 Լցվի բոլոր մրգերի մեջ...  
 Որ խաղողի ողկույզները  
 Մարգարտաեռ, ցոլֆաշլաց,

Կույս գեղուհու պարաշարժուն  
Ոտիկներով ճմովեն ու  
Հյութահոսքով բախտավորվի ամեն հնառւն:  
Հետո ասեմ,  
Վաստակաբեռ ասե՞մ, ասե՞մ.  
-Գնա՛, հովիկ, անուշ հովիկ,  
Հիմա էլ բող  
Զյունի աստղոտ փաթիլը գա,  
Հանգստանա ձեռքն անհանգիստ՝  
Այգի ու բար արարողի,  
Հանգստանա մինչև գարուն  
Առատընծա վարարքն հողի:  
Որ հովիկ ջան, դո՛ւ էլ, դո՛ւ էլ հանգստանաս...  
Հայրենիքից հեռու եմ, ախ...  
Իմ տենչավառ օրը երբ գա,  
Որ Արարատ սարը կանչի,  
Որ հայրենիք տանի ճամփան՝  
Կդառնամ նորեն պարտիզպան:

*22.10.2009<sub>P.</sub>*

### ԽՐԱՏ ԶԵ, ՊԱՀԱՆՁ Է

Իմ ցավը՝ դուրս,  
 Իմ ցավը՝ ներս...  
 Ինչքա՞ն պիտի ես համբերեմ,  
 Որ մեզ էլ տան  
 Արդարություն լուսավորիչ,  
 Ինչքա՞ն պիտի Աստծո օրի  
 Չարչարանքները ես ներեմ,  
 Ինչքա՞ն պիտի ես համբերեմ...  
 Վերից Հիսուս ներքև քերեմ,  
 Մբողեմ լույս հոգեսմաշ,  
 Բայց ժպտալով համոզեմ, որ  
 Թե նվազած, թե քիչ ենք, քիչ՝  
 Հա՛յ ենք, հա՛յ ենք  
 Եվ շողարշավ՝ ունենք փրկիչ...  
 Ունե՛նք, ունե՛նք -  
 Հայկազուն ենք,  
 Տաճար երկիմք պահող սյուն ենք,  
 Նվիրյալը վերին գահի,  
 Մահ քերողը ժանգ ագահի:  
 Ասածս նիշտ, նիշտ է ու նիշտ,  
 Բայց մի՛շտ, բայց մի՛շտ  
 Հենց մենք ենք մեզ  
 Հաճախ, նաև, տալիս մեծ վիշտ:  
 Հենց նեղն ընկնենք, դառնանք սոված՝  
 Մենք մեր հողն ու քարը քողած՝  
 Հետանում ենք օտար ափեր...  
 Եվ ամոք չէ՞ր, որ մեզ, ախ, մեզ  
 Կուշտ ուտելը պիտի խարեր:  
 Եվ, ա՛խ, ավա՛ղ, ամոք չէ՞ր, որ  
 Դոնարաց, նոր այս դարի մեջ,  
 Տուն լիեին, թեկուզ, թեկուզ կարիքավոր...  
 Եվ լուսավոր տուն հիմնեին  
 Հարուստ, բայց մեզ արհամարհող  
 Օտարի մեջ:  
 Պետք էր, շա՛տ պետք  
 Այս մեզ հասած նոր դարը մեզ:  
 Դժվարության մենք սովորած,  
 Չարքաշ եղած, եղած սոված,  
 Տեսած ցավը ամենամեծ,  
 Տեսած եղեռն  
 ... Ոչ թե տեսել, հեղել էինք  
 Ծովատարած արյան հեղեղ:  
 Ինչքան էլ որ լիներ կարիք,

Պիտի կպչեիմք մեր քարին,  
 Նվիրվեիմք մեր պայքարին,  
 Աստվածաբար մեր հողին սուրը -  
 Կլինեիմք առավել մենք  
 Խաղաղատենչ մեր բանակի  
 Փրկիչ ձեռքը միշտ վեր պահող -  
 Փրկիչ ձեռքում՝ զորքնդեղ սուր:  
 Ախր, գիտեք, տեսնում եք, չե,  
 Որ արճախում, որ վայրենիք  
 Մեզնից խել են Հայրենիք...  
 Գիտե՛ք, գիտե՛ք, որ աչքերը նրանց  
 Երբեք չի կշտանում...  
 Կորցրածի համար եք-ն  
 Մենք ողբում ենք ու վշտանում,  
 Բայց թե նրանք, տեսնում եք, չե,  
 Զարքասովոր, ստավարպես ո՞նց են կպել  
 Մեր արմատին ամենահին -  
 Արյամք փրկած Արցախին մեր, ամենամեր:  
 Եվ ամեն ինչ անում են, որ  
 Զավթեն, զավթեն, այդ էլ զավթեն:  
 Ուժը նրանց՝ զազրասուտն է,  
 Մեկ էլ նաևը:  
 Դրանով են համար շահում  
 Պետություններ շահատեսակ...  
 Այս ամենը տեսել էիմք, նորից տեսանք:  
 Բա որ տեսանք,  
 Բա էլ ո՞ւր եք այս մի պունուր  
 Հայրենիքն էլ, մի կերպ փրկած,  
 Թողնում, դառնում հեռագնաց...  
 Ինչ է՝ այնտեղ ապրուստ կա, հաց:  
 Հանուն փորի -  
 Այս մի պունուր հայրենիքն էլ  
 Թե դատարկվի... թե՝, թե՝, թե՝, թե՝...  
 Չե՞՞ հասկանում, որ ակնապիշ  
 Այդ է ուզում, բուրքն էլ հենց այդ,  
 Որ այդ մի ֆիչ,  
 Մի բուռ կոչված Հայաստանում  
 Էլ գոյության չարժանանա  
 Եվ ոչ մի հայ:  
 Որ ազատվի իր դահնաեն  
 Արարեների համար բազում -  
 Հայությունից՝ դատ, դատաստան պահանջելուց  
 Եվ, վերջապես, էլ այլս,  
 Գործած բոլոր չարիքները  
 Կոծկել, ծածկելուն անկարող՝ նահանջելուց...

Գիտե՞մ, գիտե՞մ, այդ ամենը  
 Դուք ինձանից հասկանում եք  
 Առավել լավ...  
 Թե որ այդպես հասկանում եք,  
 Երբ հայ եք ու  
 Հայի անուն, ազգանուն եք,  
 Ել ինչո՞ւ չեք կաշում դուք ձեր  
 Մի կերպ վրկած հռղ ու քարին...  
 Գիտեմ, գիտեմ, որ երբեք չի' ունենա  
 Հայրենիք նա,  
 Ով սուրբ անվան համար նրա՝  
 Չպայժարի...  
 Գիտեմ, գիտեմ, խոռվելու  
 Պատճառները շա'ւ են ու շատ,  
 Բայց պատճառներն  
 Ինչքան ել որ լինեն դաժան -  
 Պիտի անշուշտ մենք դիմանանք...  
 Գիտեմ, գիտեմ, սակայն անվերջ  
 Այս ամենը իմանալով,  
 Պեսէ է՝ առավել դիմանանք,  
 Փորձությունն այս պիտի կոչենք  
 Մենք՝ Աստծո...  
 Ու դիմանանք:  
 Մենք մեր ձեռքով, մենք մեր եղած  
 Հայրենիքն ել  
 Չդարձնենք ոստիկն կեր,  
 Ցանկությունը նրա խննեց  
 Չդարձնենք առավել գեր:  
 Դե ուրեմն ցանկությունն իմ  
 Ու ասածը՝  
 Որքա՛ն, որքա՛ն ել ձեզ ծանոք,  
 Որքա՛ն, որքա՛ն ել լինի նառ,  
 Ամեն ինչը իմանալով  
 Նորի՛ց, նորի՛ց մենք իմանանք -  
 Մեզ բուժողը, մեր վրկիչը -  
 Համառ կամքով մաքանելը -  
 Սիրո ուժով  
 Դիմանալն ու համբերանիքն է...  
 Անկարելի ու առանց նար՝  
 Ոչինչ չկա...  
 Կա՛ վրկություն, կա՛ անպատճառ:

## ԱՅՍ Է ԴԵՌ...

Օ՛, այդքան ողբ, այդքա՞ն աղետ, որ հորդեց  
 Մեր վերինի հեղեղահոս արյունով.  
 Ողջ աշխարհի եղած ցավերը մեկտեղ -  
 Մեր ցավերի դեմ եղան չնչին, չնչին, աննշմար...  
 Եվ հիմա էլ՝ դեռ վիշապը չի կշտացել,  
 Դեռ համար,  
 Մեր մնացած, փրկված, մի բուռ կյանքի դեմ՝  
 Ախորժախու նորից, նորից խենեշ տենչն է ցուցանում...  
 Եվ գահերը նորից, նորից աշխարհատեր բնույթներով,  
 իբրև, իբրև կարեկցությամբ փափկապայն,  
 Համոզում են վիշապին այդ՝ հաշտություն,  
 Նվիրելով նոր տեսակի դիվանագետ հաղթություն.  
 Շահը որ կա, ոչ մի հզոր երկիր սակայն դահնությանը  
 Արդարության իրավ ուժով սասանող փորձ չի անում:  
 Նոր դար է, բայց չի' նորանում, դեր չունի  
 Ոչ մի տեսակ, ոչ մի արդար բարի ուժ:  
 Ահա՛, ահա՛ ա՛յս է պատճառն իրական,  
 Որ դարձրել է անխաթաք՝ չարի ոխը  
 Ահարեկող, անհանգիստ ու հողմախուժ:

*25.11.2009թ.*

## ԼՔԵԼՆ ՀԱՆՁԱՆՔ Է

Ճիշտ է՝ հայրենիքն ամեն տեսակի  
 Քաղցրություններից բաղցը է անշուշտ  
 Եվ երկնավայել ամեն տեսակի  
 Բարձրություններից բարձր է անշուշտ,  
 Բայց հայրենիքը նրա համար չէ,  
 Որ վայելես ու հետո դժվարին  
 Պահին հեշտությամբ լինես, չամաչես...  
 Վիճակը դարձնես վիճակ քշվառի:  
 Նրա համար է հայրենիքը միշտ,  
 Որ նրա համար մաքառես սրով,  
 Որ նրա համար կրես ամեն վիշտ  
 Եվ փրկես նրան բաջազոր սիրով:  
 Չեմ ուզում այն խև օրերը հիշել,  
 Հայասպամդի սարսափն այն ահեղ...  
 Արևն էլ էր որբ, ցավի սև գիշեր,  
 Սև, չյուսացող, սև, արյունահեղ:

Ախ, այն ժամանակ, քչերս փրկված,  
Երբ մի կերպ հասանել ափերը օտար,  
Մեր սրտում մահի ճանկերը պրկված,  
Ախ, հազիվ էինք սարսափախաքար  
Քայլ անում մի կերպ, Տեր կանչում հազիվ  
Ու խնդրում հազիվ, որ մեկը գրար,  
Որ փրկեր, փրկեր այդ սև օրհասից:  
Հասկանալի է, վիճակն էր այդպես...  
Մեր հայրենիքը մենք չէինք լինել,  
Հալածանեն էր մեզ նետել խորք ափեր,  
Եղիոնագենեն խոռոշամբ լլկել:  
Ախ, այն ժամանակ, ախ, ուրիշ էր, ախ,  
Մի բուռ հայրենիք չունեինք գոնե,  
Զարդից՝ մազապուրծ, մի կերպ, փախեփախ,  
Գառըի խարխափի մեջ էինք կորել:  
Լավ է, աշխարհում ամեն ազգ բուրք չէր,  
Լավ է, կար, որ կար ուրիշ ազգ նաև,  
Ամեն ազգ, լավ է, որ խղճից զուրկ չէր,  
Խիղճը աչք ուներ՝ մեզ բարի նայեց:  
Փրկեցին մարդիկ, տուն ու տեղ եղանեն,  
Բայց հայրենիքը, կորցրածը բայց,  
Նարուի ամպով սև անձրև տեղաց.  
Մերը եղան միշտ թե՛ ցավ և թե՛ լաց:  
Փառք Աստրծո, հիմա ունենք հայրենիք.  
Ինչքան էլ փոքր՝ տերն ենք մեր գլխի.  
Ճին ոխով ինչքան ոռնան վայրենիք,  
Ինչքան էլ կոծկեն իրենց մեղքը խիտ,  
Չնեն կարող սակայն եղածը ժիտել -  
Եղեռնը ժիտել չեն կարող, օ՛, չէ՛...  
Ճշմարտանվեր լույս կտա բախտը.  
Մեկ է, կծաղկի փրկավառքը ջերմ -  
Փա՛ռք, փա՛ռք Աստրծո՝ հայրենիք ունենք.  
Լինել հանցանեք է՝ դրդված կարիքից.  
Գոհություն կտանել թշնամուն մեր նենգ,  
Անող կդարձնենք ուժը չարիքի,  
Նա մեր Արցախն է կամենում զավթել,  
Եվ զրպարտությամբ, վարքությամբ ետին,  
Ամեն հնարքով տարածում է, թե  
Արցախը իրենց երկիրն է երմիկ,  
Եվ դրա համար, դեռևս փոքր  
Հայրենիքը մեր լոռող ամեն հայ  
Թող նայի հոգու ամենախորքը -

Կտեսնի, որ իր արարմունքը այդ  
 Դավանանություն կարող է կոչվել,  
 կարող է կոչվել հեշտ միանգամայն...  
 Իրավունք չունի ոչ մի հայ չվել,  
 Երկիրն իր, տունն իր հայրենանվեր  
 Լքող ամեն հայ  
 Թող մտածի, որ զինվոր է ինքը,  
 Ազգի խոացում, մտածում ազգի,  
 Խնչպես ալիքվող ցորենի արտում  
 Կարևորությունն ամեն մի հասկի:  
 Հանուն զեխության, երկիր լքելով,  
 Թշնամու առաջ նահանջում ենք մենք,  
 Ավելացնում ենք տենչանքը գերող  
 Եվ նրա միակ նպատակը նենգ:  
 Հայրենիքն ազգով պիտի խոանա,  
 Խոացումն ուժն է գերազույն զենքի,  
 Որ գալիքներով անվերջ ընթանա,  
 Ունենա նամիա և տիեզերքի:  
 Քուն, թե արքմնի իմացեմ անվերջ,  
 Զեր տան նամիան է փրկության նամիան...  
 Սերն է փարատում ամեն տեսակ վեճ,  
 Բացում տենչանքի ամեն դուռը փակ:  
 Ամեն թիզ հողդ վարիր մատներով,  
 Քո մի թիզ հողն էլ դու դարձրու հաց,  
 Թեկուզ քրտինքիդ լրիկ հատնելով՝  
 Քամիր քարի էլ բարիքը պահած:  
 Թե հայրենիքը քաղցր է և անուշ  
 Քայց մի՛ դառնացրեմ դառնալով հեռու,  
 Նրան մի՛ դարձրեմ արցունքուված հուշ,  
 Մի՛ արդարացրեմ՝ երգելով «Կոռունկ»:  
 Հեռվից սիրել սիրել է թեև,  
 Բայց թշնամուդ ես մոտեցմում երկրիդ,  
 Թշնամուդ, որ միշտ զավթածի տեր է,  
 Որ հարազան է դահնության պրի:  
 Դուք ձեզ միշտ տեսեք մոր արցունքի մեջ,  
 Մոր արցունքի մեջ ձեզ տո՛ւն, տո՛ւն կանչող,  
 Թե լավ է օտարժ իր վարմունքի մեջ,  
 Բայց մոր համբույրն է կյանքությունը նոխ:  
 Ինչ պատճառով որ հեռանում եմ դուք՝  
 Բոլորն էլ գիտեն, ասեմ, թե չասեմ...  
 Արհամարհվածի ցավն է ձեզ ուտում,  
 Հայրենիքում ձեզ զգում եմ նսեմ:

Խարում են, խարում ու շատ են խարում,  
Կաշառքը արդեն չի ճանաչում չափ,  
Անգործությունը սևակմած ամպում,  
Պայյօռում է ձեր մեջ՝ ձեզ դարձնելով չար:  
Նրանց պատճառով, ոչ թե պետք է, որ  
Գործազրկությամբ հայրենիք լինի,  
Այլ նորից դառնալ մաքառող զինվոր,  
Կովկաս դրանց դեմ, դառնալով արգելք:  
Ինչ է որ լինի, բայց չէ՞ որ գնալն  
Առավել ծանր է, առավել դժվար,  
Որ գործ դարձնելով ամեն մի հնար,  
Դառնում եմ, մեկ է, անպատիվ քշվառ:  
Դժվար է, ճիշտ է, սակայն ինչն է հեշտ -  
Երբ որ ուզում ես ունենալ երկիր -  
Պիտի նոր, միշտ նոր մաքառում մաշես...  
Ուժ պիտի դառնաս սրտիդ ու ձեռքիդ:  
Պարզ է, մեր մեջ էլ քշնամի ունենք.  
Ահեղ քշնամի, անունը՝ կարիք,  
Գիտեմ, որ այդ չար, տաճշող անունը  
Ձեր ուշքն ու միտքը պիտի խանգարի,  
Պիտի գամի ձեր հայացքը հեռվին,  
Ճեռուն պիտի ձեզ կանչի մշտազրադ,  
Դուք արդեն որպես թափառող դերվիշ -  
Երազանքներով պիտի փնտրեք բախս:  
Բայց չէ՞ որ, չէ՞ որ եղեռն տեսանք մենք,  
Մենք, փրկվածներս՝ մեկը հազարից...  
Մենք հերոսակառ կյանքի արյամբ մեր  
Երեկ փրկեցինք Արցախն ազարից:  
Մի՞թե փրկեցինք, որ կորցնենք նորից...  
Մի կտոր հաց է, կուտենք, բայց երբե՞ք  
Զի՞ կարող մատնել մեզ կորցրած օրի  
Սատանարարո չարիքն անհամբեր:  
Ինչ որ կանք հիմա, հիմա ինչ որ կանք,  
Հայրենիքից դուրս թե հայրենիքում,  
Պիտի ամեն կերպ, միայն պատվականք  
Պայքարենք ի սեր հայրենյաց ոգու:  
Կան բարեկամներ, բայց հին քշնամիք -  
Թշնամություն են առավել ախորժ,  
Ամեն պահի մեջ և ամեն ժամի:  
Կամենում են մեզ ծվատել վախով...  
Բազմացմամբ մոլի՛ կամենում են իիստ  
Հունաստանից մինչ Զինաստան տիրել,

Ուզում են դառնալ առավելս խիտ,  
 Դառնալ են ուզում աշխարհատերեր...  
 Դառնալ են ուզում, քանզի բազմացան,  
 Բազմացան ենց մեր կյանքը խմելով,  
 Եվ առավելս մոլի ռազմացան -  
 Բյուզանդիայով՝ կյանքն իրենց խխմելով:  
 Զավթած մեր երկիրն Արարատով մեկ  
 Արցախ են տենչում բաշխել ազարին,  
 Դնելով միշտ մեզ վիճակի մեջ եղկ -  
 Շարժվում են իրենց վարքով նեսարի,  
 Ահարեկում են, անում ինչ ուզեն,  
 Շահել են շահով, շահել ամեն ինչ,  
 Կամեցածներին նենգությամբ հասել,  
 Դարձել յաքաղան ու գլխատել խիղն:  
 Այնպես ուզում եմ ամենայն ոխով,  
 Խնկի շարժումով ամենատգեղ  
 Սիհամանքոյի նման զայրախոս -  
 Եվ արդարության նակատին քքել...  
 Սակայն չարիքը հաշվում է ուշիմ,  
 Թե քանի հայ է տուն ու տեղ լքում...  
 Դաժան՝ ուզում է արհավիրք խուժի,  
 Որ հայ չմնա իր հայրենիքում,  
 Որ ամբողջանա նպատակն իրենց,  
 Որ տիրեն մեր այս երկիրն է մի բուռ,  
 Որ պատճառ բռնն, որ ասեմ՝ հայն է  
 լքելով դարձել երկիրն իր քափուր:  
 Հասկացե՛ք, հայե՛ք, ինձ լա՛վ հասկացե՛ք,  
 Զի՞ փրկի սկյուռքն անհայ Հայաստան,  
 Դուք հայրենիքում անեք, ազգացեք,  
 Մի՛շտ բռունցքվելն է մեր ուժը հաստատ:  
 Գևոռգ սնվողն է դառնում լեցուն ծով,  
 Ավա՛ղ, կորչում է ծովը գետ սնող...  
 Դուք մի խաբարեք օրենքը Աստղծո -  
 Նրա նվիրած հայրենիքն է որ  
 Զեր ազգանունն է և, պարզ է՝ ծնող:  
 Նրա համար է հայրենիքը միշտ,  
 Որ Դավթակորով մաքանես սրով.  
 Որ նրա համար կրես ամեն վիշտ  
 Եվ փրկես նրան քաջազոր սիրով:

7.02.2010թ.

### ԹԵ ԻՆՉՈՒ ԵՄ ԵՍ ԹԱԳԱՎՈՐ

Ես իհարկե բագավոր եմ...  
 Նրա համար, որ պահապունն եմ իմ երկիր տաճ:  
 Հրամաններն իմ կարևոր -  
 Տեսչամեթախոս տարածում են  
 Միայն ու միայն արև օր:  
 Ես իհարկե, որ բագավոր եմ:  
 Թագավոր կեմել են ինձ...  
 Ճիշտ են արել, քանզի շատ եմ ես հարկավոր -  
 Այգագորք և աստղագորք ունենալու համար.  
 Ճիշտ է, իմ գորքները հարձակվում են ու գրավում,  
 Սակայն փրկում են տարածքները խավարի տիրությունից.  
 Ազատում են նեսարության դրությունից:  
 Ազատագրությամբ իմ գորքների՝  
 Դրախտագետեր են հորդում հիմա  
 Դեպի այդ տարածքները խավարախոր...  
 Արեգակների վրա ես իմ՝  
 Այրում եմ բռնոր հրովարտակները խորք,  
 Որոնք եղել են գեհենության  
 Սկիզբն ու կոչումը դահճակացնի...  
 Իմ գորքներով աստղատարած, արեգնածին,  
 Կատարում եմ նպատակը Աստղն:  
 Իմաստությունն արևների,  
 Որ համարվում են լուսածով,  
 Օգտագործում եմ անսահման ու  
 Երջանկավառ գալիքության նշմարտությամբ:  
 Ամե՛ն, ամե՛ն արդարագոր,  
 Հաղթանակող մենամարտությամբ  
 Վերացնում եմ չարիքները անցյալամիտ...  
 Ամենուրեք լույսն եմ, լույսը ես դարձնում միտք:  
 Ահա թե ինչու եմ անչափ ես հարկավոր,  
 Ահա թէ ինչու եմ ես բագավոր:

*28.02.2010թ.*

**ԻՄ ՆԱԽԻԶԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԿԱԶՄ**  
**ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՂԵՌՆԱԳՈՐԾՆԵՐԻՆ**

Ո՞վ նեճգամիտներ, չհամեմատվող ձեր վայրիությամբ  
 Դուք ջարդուփշուր անելով այդպես  
 Քարեղեն, սակայն Աստծո հետ խոսող  
 Այդքա՞ն պատմություն,  
 Այդքա՞ն ոգեղեն կերտված հրաշքներ -  
 Ձեր եղեռնախոս վկայությունն եք  
 Ամրող աշխարհին ցուցանում առատ:  
 Ցուցանում, որ դուք ոչ թե ժողովուրդ,  
 Այլ մեծ արատ եք ամրող աշխարհում,  
 Որ կոտորեցիք ազգս, հիմա էլ  
 Նրա վերատուր արարչությունն եք  
 Գլխատում ազատ, որ, այո՛, այո՛, մարդ հասկացության  
 Չպատկերացվող դիվախուժությամբ  
 Եռք եք եեղեղված, չլավա՞ծ արատ:  
 Չարություն շատ էր տեսել աշխարհը,  
 Ոչ մեկը սակայն այդքան չէր եղել  
 Դժոխադաժան վարքությամբ պարարտ:  
 Ոչ թե հայություն,  
 Ամրող աշխարհի ազնիվ մարդկության  
 Պատմությունն եք դուք ոխեռանդ փշրում  
 Եվ նենգ գոհությամբ ցույց եք տալիս, թե  
 Չարությունը մութ, ձեզ համար անամբ,  
 Ինչքա՞ն կարևոր, մեծ կշիռ ունի...  
 Փշրում եք, փշրում...  
 Եվ արդեն, ձեր չարք անունի կոչմամբ,  
 Գեհեռնությունն եք քրիչով կշռում:  
 Այնքա՞ն եք տգետ, որ կարծում եք դուք,  
 Թե ձեր փշրելով  
 Զնջում եք հետքը, արմատը հայոց...  
 Մի պահ շուր եկեք և  
 Արարատին նայեք ձեզ նայող.  
 Այդ հայասարից ոչ թե դուք, նոյն է  
 Կյանքաշուր իշել  
 Ասում եմ, սակայն ես շատ լավ գիտեմ,  
 Որ դուք չգիտեք բառը «ամաչել».  
 «Ամաչել» բառը, ո՛չ, ձեզ համար չէ...  
 Ինչ որ արել եք, արել եք միայն գազանարարո...  
 Գիտեմ, քայլել եք ու պիտի քայլեք  
 Նույն նանապարհով,

Քանզի դուք ունեք եղբայր ավագ, որ  
Տասնապատիկ է զազիր առավել,  
Որ տեթչամեները նրա մարդակուլ  
Տևական են միշտ և չեն պառավել:  
Եվ դուք նրանից առել, առնում եք  
Պահապան դասեր:  
Ինչ նա է անում հետևում եք դուք  
Անքաժան ու սերտ...  
Որպես նույնություն, երեկվա ույղուր, այսօրվա ազեր:  
Բայց դատաստան կա, Աստծո դատաստան,  
Եվ սահման ունի ամեն համբերանեֆ...  
Աստված չի բռղնի,  
Որ դուք մեզ միշտ տաք  
Այդքա՞ն, այդքա՞ն վերք...  
Իմացեք, որ դուք  
Առավել դաժան պիտի փշրվեք:

24.03.2010թ.

### ՓՐԿԱԶՈՐ ԿՑԱՆՔՈՒԹՅԱՄՐ

Իմ այգում արդեն կան ծերացած ծառեր...  
Արմատախիլ անել չեմ փորձում:  
Շտապել, կարծում եմ,  
Պետք չէ այդ գործում:  
Երբ կա վերասուր հնարանեք ու խելք,  
Եղել է ու կա կյանքապարզ ելք:  
Մառերիս բնաշուրջ թևերը առողջ՝  
Քիչ վերից հատում եմ,  
Որ ծառն ազատվի կնճռածեր նյուղերից...  
Ես այդ անում եմ խղճով անաղարտ,  
Հատում եմ, որ ծառին  
Պարզեմ նոր սաղարթ,  
Որ դառնա ծառը նորանյուղ ջահել:  
Սակայն չկարծեք, թե  
Ծեր ճյուղն հատում եմ հեշտ...  
Ամեն ծառ, յուրովի,  
Հուշ է իմ մեջ պահել,  
Ամեն ծառ, կենաց ճգնաւմով ազատ,  
Եղել է՝ նախ գարման բովչանեֆ ծաղկագարդ,  
Հավելության երգատեղ-

Ու հետո եղել է այն  
 Արևի տեսքը, վառքը ամփոփող՝  
 Բույր ու համբ թերք:  
 Խսկ հիմա, վերևի ճյուղությամբ խնճված,  
 Ծեր է շատ, բախծարեն  
 Եվ անզոր է, անուժ՝  
 Պարգևել թերք անուշ:  
 Բայց Աստվածն ամենուր  
 Ուշադիր է անչափ...  
 Կյանքատեղծ գաղտնիքով  
 Վանում է մահը չար:  
 Ծառերի բնաշուրջ՝  
 Իմ բողած ու առողջ թևերի  
 Կեղևների տակ կան բողոքներ խոր բնած:  
 Զարմանք է հիրավի Տեր Աստրծոն  
 Սյդ հրաշքն էլ երկնած...  
 Տարինե՛ր, տարինե՛ր  
 Կեղևի տակ ծառի սպասել են անտես...  
 Որ վտանգը մահվան  
 Մոտենա ծեր ծառին՝  
 Բողոքներն արթնանան ու արդեն  
 Քնաշուրջ թևերից իմ բողած,  
 Փրկազոր կյանքությամբ,  
 Ըստուղվեն, դառնան շիվ...  
 Իմանալով ես լավ  
 Պարգևը Աստրծոն փրկարար այդ ուժի-  
 Մի նոր կյանք եմ տալիս թերքընծա:  
 Բայց ես էլ, ախ, արդեն  
 Բավական ծերացա...  
 Եվ հիմա, իմ մեջ լուռ, հույսեր եմ հավաքում...  
 Ու խնդրում Աստրծուց-  
 Դեռ ինձ կյանք տա այնքան,  
 Որ նստեմ գոհությամբ՝ թեկուզ քիչ...  
 Իմ ջանքով՝ ջահել կյանք պարգևած  
 Ծառերիս շվաբում:

1.04.2010թ.

Ժայռապատկերներ... երևի թե  
Մի հիսուն հազար տարի առաջվա:  
Հիսուն հազար տարին ի՞նչ է...  
Մի՞քե մարդկային բանականությունը  
Այդքա՞ն ուշ է սկսվել:

Ես նայում եմ վեր...  
Գլխավերևումն թևաբախում է  
Մի շիկավուն բազե,  
Նս ասում է ինձ.  
-«Դու ճիշտ ես,  
Հիսուն հազար տարին ի՞նչ է,  
Ես մի օրում անցնում եմ ճախրելով»...  
Ասում է բազեն  
Ու անէանում որպես  
Կայծակի ցոլք:

Քարապատկերները, խումբ-խումբ հավաքված,  
Ժամանակ արածող  
Հոտի են նման:  
Նրանց շուրջ բոլորը դրախտ է,  
Ծաղկունիքի ծով:

**ԾԱՏ ԵՄ ՈՒԶՈՒՄ**

11.04.2010թ.

Հայաստա՞ն, այնպիսի Հայաստան  
Ինչպես երեկ էիր, ինչպես այսօր -  
Վաղը չես լինի...  
Դու այնքան արագ ես փոխվում,  
Սակայն ուզում եմ, որ դու քո փոխվելով՝  
Դեպի հրաշքը, դեպի փրկությունը գնաս.  
Դու քո գնալով, ահ, ուզում եմ,  
Շա՞ն եմ ուզում, որ ապրես  
Միայն և միայն այդ հնարանենով...  
Շա՞ն եմ ուզում,  
Որ ինչքան էլ դառնամ անցյալ,  
... Դառնամ եռյ -  
Իմ մեջ հունդի պես ծլի ու ծաղկի  
Ներկան ու ապագան քո:

16.04.2010թ.

## Summary

LUDVIG DURIAN - LUSEGHEN KRISTOSTURIAN

SIRANUSH KRISTOSTURIAN

Ludvig Durian (Luseghen Kristosturian) (1933-2010) is an Armenian poet and writer. He was born in the village of Chalder, in the province of Rostov in Russia, which was considered the shelter of the exiled population of Western Armenia's most beautiful city of the "1001 churches"- ANI.

In 1934 he moved with his family to Armenia and settled in the small village of Shahab (currently Mayakovsky) in the region of Kotayk. His sad childhood was marked by the early death of his mother, the marriage of his father and the loss of the sight of one of his eyes. The child was urged to live away from the family with an aunt, in Yerevan.

Regardless the sufferings he had gone through, the most remarkable in his writings was the endless love he always carried in his heart and his soul: love for his Motherland, love for Mother Nature, love for his family and for everything he did. Over 35 collections of poems, many songs lyrics in collaboration with famous composers; his autobiography "This much of my life" which was published after his death crowned his legacy. A considerable number of poems remain unpublished of which a beautiful bunch is offered to your attention.